ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1963 Общественные науки

Դ. Ի. Միշկո

ՀԱՅԵՐԸ ԿԻԵՎՈՒՄ 15-ՐԴ ԴԱՐԻՑ ՄԻՆՉԵՎ 17-ՐԴ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԸ*

Պատմական փաստաթղթերը հավաստի բիչ տեղեկություններ են պահպանել հայերի կյանքի ու գործունեության մասին միջնադարյան Կիևում: Դա կարելի է բացատրել նրանով, որ Պոդոլի ոտուշայում և բազմաթիվ եկեղեցիներում պահվող Կիևի փաստաթղթերը 1399, 1416, 1482, 1511 թվականներին քաղաքի վրա կատարված թաթարական հարձակումների ու ավերածությունների և 1651 ու 1811 թթ. հրդեհների ժամանակ ոչնչացել են: Ուկրաինայի տարբեր քաղաքներում պահպանված պատահական նյութերը խիստ համառոտ հիշատակություններ են հաղորդում ֆեոդալիզմի շրջանում կիևահայերի գործունեության մասին: Այս հարցի առթիվ գրականություն նույնպես գրեթե գոյություն չունի:

Այնուամենայնիվ, մեզ հասած պատմական մի քանի նյութեր վկայում են, որ հին ժամանակներից ի վեր Կիևում ապրել են հայ արհեստավորներ, առևտրականներ, սեպագործ բանվորներ, այգեպաններ: Այդ կապակցությամբ մենք վկայությունների ենք հանդիպում տարբեր աղբյուրներում: Չնայած թաթարական ծանր լծին, հայ առևտրականները Կովկասով, Կուբանի ու Դոնի տափաստանների վրայով, ինչպես նաև Սև ծովով գալիս էին Արևելյան Եվրոպա և զբաղվում առևտրով: Նրանք երևում էին նաև Կիևում, Կամենեց-Պոդոլսկում, Լվովում, Յազլովցում, Կրեմենցում, Ռուշաշում, Սմոտրիշում և այլ քաղաքներում, ուր վաճառում էին իրենց ապրանքները և զնում արհեստագործական արտադրանք: Կիևի վրայով նրանք ապրանքներով ուղղվում էին Չերնիգով, Նովգորոդ-Սևերսկի, Մոսկվա, ինչպես նաև Պինսկ, Սլուցկ, Մինսկ, Բրեստ, Վիլնյուս և Լենաստան[1]:

Այդ իսոն ժամանակներում միջազգային առևտրի համար պայմանները շատ բարդ էին[2]: Առանձնապես դժվար էր ապրանքներ տեղափոխել հարավուկրաինական տափաստաններով, որտեղ մշտապես թափառող թաթարական հորդաները և ավազակային խմբերը հարձակվում էին վաճառականների քարավանների վրա, զրավում ապրանքը, դրամը, ձիերը ու սպանում մարդկանց, եթե նրանք չէին հասցնում թաքնվել անծայրածիր տափաստանում[2]:

Թաթարական հորդաների և ավազակախմբերի հարձակումների ժամանակ շատ հայ վաճառականներ զրկվում էին ապրանքներից և իրենց կյանքը փրկում փախուստի միջոցով: Նրանք գալիս էին Ուկրաինա, հաստատվում գյուղերում ու քաղաքներում, ուր զբաղվում էին արհեստներով և մանր առևտրով, իսկ ոմանք էլ քաղաքներում կամ գյուղերում ձեռք էին բերում հողակտորներ և զբաղվում հացաբույսերի մշակությամբ, բանջարագործությամբ ու այգեգործությամբ: Միջին դարերում, ուկրաինական շատ քաղաքներում ու գյուղերում հաստատված հայերն ամենուրեք ծավալել էին օգտավետ աշխատանք, և տեղական բնակչությունը նրանց նկատմամբ ցուցաբերում էր մեծ հարգանք, ցույց էր տալիս ամեն տեսակի օգնություն:

Թե 15—17-րդ դարերում ինչքան է եղել հայերի թիվը Ուկրաինայում և մասնավորապես Կիևում, այդ մասին աղբյուրները մեզ ճշգրիտ տվյալներ չեն տալիս: Բայց որ նրանց թիվը շատ է եղել, դա երևում է զրավոր փաստաթղթերից և նյութական կուլտուրայի մեզ հասած հուշարձաններից: Այդ մասին են վկայում քաղաքային ու տեղական դատարանների ակտերը, բարձր իշխանական և թագավորական հրովարտակները, որոնցով հայերին շնորհվել են ինքնավարություն, հողեր ունենալու, եկեղեցիներ կառուցելու, արհեստներով ու առևտրով զբաղվելու իրավունքներ:

---

* *Զեկուցվել է 1962 թ. նոյեմբերի 23—26-ը Կիևում և Լվովում տեղի ունեցած հայ և ուկրաինական պատմաբանների գիտական սեսիայում:*

[1] O. Balzer. Statut ormianski w zatwierdzeniu Lygmunta, I r roku 1519. Lwow, 1910.

[2] Архив Юго-Западной России, ч. VII, т. V, Киев, 1907, стр. 187—190.

Ուկրաինայի քաղաքներում հայերը միավորվում էին արհեստավորական և առևտրական եղբայրությունների մեջ, մասնակցում էին դղյակների, կամուրջների, եկեղեցիների և այլ կառույցների շինարարական աշխատանքներին: Լվովում, Յաղլովցում, Կամենեց-Պոդոլսկում և այլ քաղաքներում պահպանված շինությունները վկայում են այն մասին, որ հայերի մեջ եղել են տաղանդավոր ճարտարապետներ, որոնք Ուկրաինայի արհեստների և շինարարական տեխնիկայի զարգացման վրա դրական ազդեցություն են ունեցել: Հայ արհեստավորները այստեղ տարածում էին արհեստագործության և ճարտարապետության այն լավագույն նվաճումները, որոնք հայտնի էին Մերձավոր Արևելքի և Ասիայի մյուս ժողովուրդներին: Այսպիսով, հայերը Ուկրաինայում գտնելով կյանքի հիշ բե շատ նորմալ պայմաններ, իրենք ակտիվորեն մասնակցում էին տնտեսության ու կուլտուրայի զարգացմանը, բուրգերի, քաղաքների ու գերմանական նվաճողների դեմ ուկրաինական ժողովրդի մղած պայքարին:

Կիևում հայերը ապրել են բազում դարերի ընթացքում: Կիևահայերի մասին հիշատակություններ կան «Կիև-Պեչերյան վանք սրբոցում» և այլ աղբյուրներում: Իր ուսումնասիրություններում ակադեմիկոս Մ. Ն. Տիխոմիրովը այդ հարցին հատուկ ուշադրություն է դարձրել: Նա վերլուծել է հայերի, սիրիացիների և տարբեր երկրներից Կիև եկած այլ մարդկանց հետ Կիև-Պեչերյան վանքի վանականների վիճաբանության մասին «Վանք սրբոցում» եղած հիշատակությունը: Այդ ժամանակ Կիևում ապրել է հայ բժիշկ, որը բժշկել է Կիևի մեծ իշխան Վլադիմիր Մոնոմախին ու բոյարներին3: «Վանք սրբոցում» նաև նշված է, որ Կիևում եղել է հայկական մի ամբողջ գաղութ: Այդ հիշատակությունները վկայում են նաև, որ Կիևյան Ռուսիան առևտրական կապերի մեջ է եղել Հայաստանի հետ: Հայ ճարտարապետության ու գեղանկարչության ազդեցությունը իր արտացոլումն է գտել Սոֆիայի տաճարում, Կիրիլի եկեղեցում և Կիևի հին ճարտարապետական այլ հուշարձաններում:

Հայ բնակչությունը Կիևում նշանակալից բվով պահպանվել էր 1240 թվականին, երբ բազմամբոխ թաթարական հորդան, Բաթու խանի գլխավորությամբ, ամբողջ ուժով հարձակվեց Քաղաքի վրա: Քաղաքի ամբողջ բնակչությունը, այդ թվում նաև հայերը, հերոսական դիմադրություն ցույց տվեցին ասիական հորդաներին: Բայց ուժերը անհավասար էին: Թաթար-մոնղոլներին հաջողվեց կոտրել կիևցիների դիմադրությունը, տիրանալ Քաղաքին և ոչնչացնել քաղաքի գրեթե ամբողջ բնակչությանը:

13-րդ դարի երկրորդ և 14-րդ դարի առաջին կեսերին Կիևում հայերի ապրելու մասին պատմական աղբյուրներում տեղեկություններ չկան: Բայց 14-րդ դարի վերջերին Կիևում դարձյալ երևան են գալիս հայ առևտրականներ ու արհեստավորներ: Դրան նպաստեցին լիտվական և ուկրաինական զորքերի հաջող արշավանքները դեպի Ազովի ծովի ափերը և Կուրան, երբ տափաստաններում թաթարների իշխանությունը նշանակալից չափով թուլացել էր, և հայ առևտրականները համեմատաբար ավելի ազատ կարող էին Ուկրաինա գալ: Այդ ժամանակ Ուկրաինայի և Հյուսիսային Կովկասի միջև հաստատվել էին որոշ կապեր, իսկ հարյուրավոր կովկասցիներ տեղափոխվել էին Ուկրաինա և հաստատվել նրա հարավային շրջաններում, Վորսկլա, Տյասմին, Բգուլեց և այլ գետերի մոտերը:

15-րդ դարի առաջին կեսին հայերը Կիևում արդեն նշանակալից բիվ էին կազմում: Փաստաթղթերում կան որոշ հիշատակություններ այն մասին, որ այդ ժամանակ կիևահայերը Կուրենևկայում, Սիրեցում և Ժիտոմիրի ճանապարհին ունեցել են արտեր, բանջարանոցներ և այգիներ, որոնց հրանք տիրում էին 15-րդ դարի սկզբին լիտվական իշխաններից ստացած հրովարտակների համաձայն4: Եվ պատահական չէր, որ լիտվական մեծ իշխան Կազիմիր 4-րդը, այդ նույն դարի կեսերին, հայերին առանձնաշնորհող հրովարտակով նրանց թույլ էր տալիս Կիևում ունենալ տներ, բանջարանոցներ, բնակվել Պոդոլում, զբաղվել առևտրով, արհեստներով և օգտվել այնպիսի իրավունքներից, որպիսիք ունեին Քաղաքի մյուս բնակիչները: Հենց այդ ժամանակ էլ հայերին թույլ է տրվում Պոդոլում, Կուրեևկայի մոտ, Գլինայա փողոցի վրա, կառուցել «Աստվածամոր վերափոխման եկեղեցին»5: Այս փաստը վկայում է, որ այդ ժամանակ Կիևում ապրել են շատ հայեր, որոնց հաջողվել է ստանալ եկեղեցի կառուցելու իրավունք, կառուցել այն և այնտեղ պահել մի հոգևորական:

---

3 М. Н. Тихомиров, Древнерусские города, М., 1956, стр. 293.

4 «Киевские епархиальные ведомости», Киев, 1863, стр. 255.

5 Տե՛ս Н. Закревский, Описание Киева, т. I, М., 1868, стр. 453—454, т. II, М., 1868, стр. 859.

Ինչպես նշված է Սոֆիայի տաճարի նկարագրությունների մեջ, լիտվական մեծ իշխան Ալեքսանդրը 1496 և 1499 թվականների իր հրովարտակներով հայկական եկեղեցուն Պոդոլի մոտ հողակտորներ շնորհեց: Այդ հողից ստացված եկամուտները ծախսվում էին եկեղեցական շենքերը և հոգևորական պահելու, ինչպես նաև կրոնական այլ գործերի վրա:

1511, 1513 և 1535 թվականներին լիտվական մեծ իշխան Սիգիզմունդ I-ին նույնպես հայերին հողամասեր պարգևեց: Լենական թագավոր Ստեֆան Բաթորին այդ եկեղեցուն նոր նվիրատվություններ արեց: Սոֆիայի տաճարի նկարագրություններում ասված է, որ «սրա մասիս հրովարտակները գտնվում են Կիևի կաթոլիկ եկեղեցում»[6]: Մինչև օրս էլ պատմաբանների կողմից այդ հրովարտակները չեն հայտնաբերված: Նրանց բնագրերը պիտի փնտրել Մոսկվայի հին ակտերի կենտրոնական պետական արխիվում, լիտվական մետրիկայի ֆոնդում, գրանցումների գրքերում: Երբոր և մյուս գրքերում տրված է բարձր իշխանական նվիրատվությունների ցուցակը: Հնարավոր է, որ դրանց մեջ կարելի է գտնել նաև այդ չափազանց կարևոր փաստաթղթերը, որոնք մեծ նշանակություն ունեն խնդրո առարկա հարցի լուծման համար:

Բայց հրապարակված պատմական աղբյուրներում հանդիպում ենք կարևոր մի փաստաթղթի, որը հաստատում է Կիևի հայկական եկեղեցու կողմից հողեր ունենալու փաստը: Այդ փաստաթղթում նշված է, որ 1622 թ. Կիևում ապրող հայերը վճռել են իրենց եկեղեցին հանձնել Լվովի հայկական եկեղեցու համայնքի հովանավորությանը, որպեսզի միասնաբար պաշտպանեն իրենց շահերը կաթոլիկական ոտնձգություններից: Կիևի Բաղամային մատյանում գետեղված նրանց գրության մեջ ասված է. «...мещане, обыватели киевские, сами од себе и именем всее братии ормян, обывателюв киевских, за згодным и одностайным (единомышленным) зезволеньем явне, устне и доброволне ку записанью до книг кгродских киевских зезнали тыми словы, и в они маючи наданые фундуши (пожалованые) от святое памети найяснейших кролей их милость польских, панов своих милостивых, как на костель свой ормянский (тоесть церковь) в Киеве заложеня нароженя наисветшое панны Марии збудованый, ако теж и на ксендза (священника) того ж костела их ормянского, тоеж кгрунт неподалеку места Киевского, став и млин на том кгрунте на реце Сырцу збудованый зо всими его належностями...»[7]. Այս փաստաթղթում պարզ կերպով բնդգծվում է, որ հայկական եկեղեցին Սիրեց գետի շրջանում, Կիևի մոտ, ունեցել է հողեր, լճակ, խուտոր և այլն: Այնտեղ գործել է ջրաղաց (Սիրեց գետի վրա), որը կրում էր Բոգդան անունը և պատկանում էր եկեղեցուն: Եկեղեցական հողի վրա կար գյուղական ծուխ: Հավանաբար այնտեղ ապրում էր ջրաղացպանը, որը տիրում էր ջրաղացին, ձկներով հարուստ լճակին և հայկական եկեղեցու համար կատարում էր ֆեոդալական այլ պարտականներ: Հայկական եկեղեցին կառուցված էր փայտից, այն մեծ չէր և գտնվում էր Պոդոլի վերջում՝ հայկական տների մոտ: Այստեղ գտնվում էր հայ գաղթականների ոչ մեծ մի բաղամաս, գաղթականներ, որոնք արդեն երկար ժամանակ ապրում էին Կիևում:

Այդ փաստաթղթից հայտնի է դարձել, որ Կիևում բնակվում էին շատ թվով հայեր: Նրանցից մի Բանիսլ Ժիտնի շուկայի մոտ ունեին իրենց տները: Նրանց բակերում կային բնակելի տներ, արհեստանոցներ, խուցեր, կրպակներ, սարայներ: Շուկայի շրջանում հայկական տների գոյությունը վկայում է, որ նրանց բնակիչները ամենից առաջ զբաղվում էին առևտրով ու արհեստներով: Հայերը պատկանում էին Բաղամի բնակչության շքավոր խավերին: Այդ մասին պարզորոշ կերպով ասված է հիշված ակտում, ուր նշված է, որ հայերին տարին միայն երկու անգամ՝ ծննդի և տոսի ժամանակ է թույլ տրվում օդի Բաշել և այն վաճառել տեղական շուկայում: Քաղաքում հայերն ունեին իրենց պանդոկը, ուր վաճառում էին այլ խմիչքներ: Նվազ փաստաթղթում կարդում ենք. «также теж и иншие вшелякие доходы ведлуг прав и привилеев их належачие и им служачие зо всими их доходами»[8].

16-րդ դարում կիևահայ գաղութը նշանակալից ծավալի էր հասել: Շչեկավից բրի մոտ հայերից շատերը ունեին իրենց տները ու տնամերձ հողամասերը, խաղողի և պտղատու այգիները: Միանգամայն հավանական է, որ հայ գաղթականները հանդիսացել են այն առաջին պիոներները, որոնք առաջին անգամ Կիև են բերել խաղողի արբեր, մշակել խաղողի այգիներ

---

[6] Н. Закревский, Описание Киева, т. I, стр. 859.

[7] «Чтения в обществе истории и древностей Российских», т. II. М., 1846—47; Н. Закревский, Описание Киева, т. II, стр. 859—861.

[8] Н. Закревский, Описание Киева, т. II, стр. 860.

և առհասարակ մեծապես խրանել են խաղողագործության զարգացումը: Այդ ժամանակ Շչեկավից բլրի վրա արդեն կար խաղողի մեծ այգի, ուր կիևցիները խաղող էին անեցնում: Հենց այստեղ էլ հնձան կար, որտեղ խաղողից գինի էին ստանում[9]: Շչեկավից բլրի վրա խաղողի այգի լինելու փաստը հաստատում են 16-րդ դարի մի շարք փաստաթղթեր[10]: 1552 թ. Կիևի նկարագրության մեջ ասված է, որ վիշգորոդ բլրի վրա եղել է գինու մեծ հնձան: «Оправляет винницу на Вышгороде виноградник с села Петровец Левон Милан, але пожитку з винниц тых мало, не витискають вина, ягоды там бывають»[11].

Խաղողագործ Լևոն Միլանը, հավանաբար, եղել է հայ, որը թե՛ խաղող էր մշակում և թե՛ գինի ստանում:

Փաստաթղթերը մեզ համապատասխան տեղեկություններ չեն հաղորդում 16-րդ դարում Կիևի հայերի թվի մասին, սակայն կասկածից վեր է, որ նրանք մի քանի տասնյակ ծուխ էին: Թեև հայերը բնակվում էին տարբեր տեղերում, բայց իրար հետ սերտ կապ էին պահպանում և օգնում էին միմյանց: Այս շրջանում հայերը քաղաքում ունեին իրենց հիվանդանոցը[12]:

Բայց Կիևում ապրող հայերը չէին օգտվում միևնույն իրավունքներից: Կիևի ամրոցի 1552 թ. նկարագրության մեջ ասված է, որ հայերի մի մասը օգտվում էր մագդեբուրգյան իրավունքից, «իրենց տներում նստած են տեղական իրավունքով»[13]: Մագդեբուրգյան իրավունքից էին օգտվում, օրինակ, Իլյա Օրմենիանը, Ելբե Օրմենիանը, Մորդոյին Օրմենիանը, Կիրկոր Օղիրկովիչը, Ֆեդկո Սերկիզեանը և ուրիշներ: Մագդեբուրգյան իրավունքից օգտվող քաղաքացիների ցուցակում կան հայկական մի քանի այլ անուններ ևս, սակայն նրանք գրված են այնպես, որ դրեթե անհնարին է որոշել նրանց հայկական ծագումը: Հայտնի է, որ Մագդեբուրգյան իրավունքից օգտվում էին քաղաքի առավել հարուստ արհեստավորները ու առևտրականները: Ըստ երևույթին, նշված հայերը պատկանելիս են եղել արտոնյալ քաղաքացիների խմբին[14]:

Ավելի մեծ թվով հայեր գտնվում էին ամրոցի վարչության իրավասության տակ: Մագդեբուրգյան իրավունքից չօգտվող քաղաքացիների ցուցակներում հիշատակված էին՝ «Иваниса армеников дом», «Каспар армении», «Орменского попа дом», «Богдана Семового, зять арменин», «Гришков Мельников армениновъ дом», «Мишко Арустенок», «Киркора», «Алебеев дом» և մի շարք այլ տներ[15]: Դժբախտաբար, քաղաքի հայ բնակիչների շատ ազգանուններ նշանակալից փոփոխություններ են կրել, և այժմ դժվար է հաշվել այն ծխերի թիվը, որոնք պատկանել են հայերին և գտնվել են ավագի իրավասության տակ[16]:

Մագդեբուրգյան իրավունքից չօգտվող հայերը պարտավոր էին իրենց բոլոր պարհակները կատարել ամրոցում և ենթարկվել ամրոցի վարչությանը: Նրանց թույլ էր տրվում զբաղվելու այնպիսի արհեստներով, որոնք երկրորդական նշանակություն ունեին և չէին ընդգրկվում համքարությունների մեջ:

Սահմանափակ էին նրանց առևտրական իրավունքները. նրանք կարող էին անել հացի, մսի, ձկան և այլ սննդամթերքների առևտուր, բայց նրանց արգելվում էր վաճառքի հանել արհեստագործական ապրանքներ, որոնք պատրաստվում էին արտահամքարային արհեստավորների կողմից: Ինչպես երևում է, այդպիսի հայերի վիճակը բավական ծանր է եղել: Նման վիճակում էր նաև Կիևի բնակչության մեծ մասը, որը գտնվում էր ամրոցային վարչության իշխանության տակ: Նրանցից շատերը արհեստավորներ ու առևտրականներ էին:

16-րդ դարի վերջերին կիևահայերի կյանքի վերաբերյալ մեզ տեղեկություններ է հաղորդում գերմանական Ռուդոլֆ 2-րդ կայսեր դեսպանորդ Էրիխ Լասոտին, որը 1514 թվականին դիվանագիտական հատուկ հանձնարարականով գալով Զապարոժյեի կազակների մոտ, լինում է նաև Կիևում: Իր նոթերում նա գրում է, թե Կիևում, Պոդոլում, այն ժամանակ ապրում

---

[9] Архив Юго-Западной России, ч. VII, т. I, 1886, стр. 117—119.

[10] Там же, стр. 117; O. Balzer, Sadownictwo ormianskie u srednowieczaym Lwowe, Lwow, 1909.

[11] Там же, стр. 117, 119.

[12] П. Г. Клепатский, Очерки по истории киевской земли, т. I, Киев, 1912, стр. 337.

[13] Архив Юго-Западной России, ч. VII, т. I, стр. 113—114.

[14] Там же.

[15] Там же, стр. 115—116.

[16] П. Г. Клепатский, Очерки по истории Киевской земли, т. I, стр. 337.

էին «ոչ առանձնապես հարուստ» հայեր, որոնք ունեին իրենց եկեղեցին: Ականատեսի այդ հաղորդումը կրկին անգամ վկայում է, որ Կիևում գերազանցապես ապրում էին աշխատավոր հայեր, որոնք չէին հանդիսանում ուրիշի աշխատանքի շահագործողներ[17]: Կիևի բնակիչները բարյացակամորեն էին վերաբերվում դեպի հայերը: 1552 թ. Կիևի նկարագրության մեջ ասված է, թե հայերի և ուկրաինացիների միջև գոյություն են ունեցել ազգակցական սերտ կապեր[18]:

Բայց պարբերաբար Կիև էին գալիս հայ հարուստ վաճառականներ, որոնք մի քանի օրով կանգ էին առնում քաղաքում և տեղական շուկայում առևտուր անում: Այդ մասին հակիրճ կերպով հաղորդում է 1449 թ. Կիևին տրված բարձր կանոնադրական իշխանական հրովարտակը, ուր ընդգծված է, թե հայ վաճառականները, որոնք խախտել են տեղական սովորույթային իրավունքի նորմերը և «непочестный речи делаючи с белыми головами»[19], ենթակա են տուգանքի՝ 12 կոպեկ գումարով: Այստեղ խոսքը ոչ թե տեղացիների, այլ օտարերկրացի վաճառականների (հայերի, թուրքերի, թաթարների և որիշների) մասին է[20]:

Այսպիսով, հայ վաճառականները Կիևում, 15-րդ դարի ընթացքում, հավանաբար, եղել են հաճախակի հյուրեր, երբ նրանց մասին հիշատակվում է բարձր իշխանական հրովարտակում և նշվում է տուգանքների գումարը:

Եվրոպայի և Ասիայի տարբեր երկրներից Կիև եկած հայ վաճառականները առավելապես կանգ էին առնում տեղացի հայերի մոտ և զբաղվում առևտրով: Այդ մարդկանց միջոցով կիևահայերը կապ էին պահպանում իրենց հայրենիքի, հարազատների, այլ քաղաքների հայ բնակիչների հետ, ծանոթանում էին միջազգային իրադարձություններին: Առհասարակ, այն ժամանակներում օտարերկրացի վաճառականները, բացի առևտրից, մեծ դեր էին խաղում նաև միջազգային նշանակություն ունեցող ռազմական, դիվանագիտական, առևտրական և այլ իրադարձությունների հետ տարբեր երկրներ ծանոթացնելու գործում: Օտարերկրացի վաճառականների շարքում հայերը հատկապես աչքի էին ընկնում օտար լեզուների, տարբեր ժողովուրդների կյանքի ու կենցաղի իմացությամբ, բշնամի պետությունների միջև դիվանագիտական բանակցություններ վարելու հմտությամբ: Դրա շնորհիվ նրանք նշանակալից հարգանք էին վայելում Կիևի վոյեվոդների և նույնիսկ լիտվական մեծ իշխանների մոտ, որոնք հայերին հաճախ օգտագործում էին Ղրիմի խաների և թուրքական սուլթանների հետ բանակցելիս: Կիևում կային բարգմանիչների մի քանի տներ, որոնց տերերը մասնակցություն էին ունենում Լիտվայի դիվանագետների՝ դեպի Ղրիմ և Կոստանդնուպոլիս կատարած դեսպանություններին, Կիևի մեծ իշխանի կողմից թաթար խաներին նվերներ տանելուն[21]:

Կիևի հայերի սոցիալ-տնտեսական և իրավական վիճակը նշանակալից չափով վատթարացավ Լյուբլինյան ունիայից հետո, որ կնքվեց 1569 թ. Լիտվական մեծ իշխանության և Լեհաստանի միջև: Կիև ժամանած թագավորական չինովնիկները, ի շահ լեհական շլյախտայի, սկսեցին մտցնել իրենց կարգ ու կանոնը: Նրանք բնակիչներից գրավում էին քաղաքի շրջակայքում եղած հողերը և դրանք հանձնում Լեհաստանից եկած շլյախտիչներին, կաթոլիկ եկեղեցու սպասավորներին, թագավորական զինվորականներին: Թարձր իշխանական հրովարտակները, որոնք իր ժամանակին տրվել էին քաղաքացիներին նողատարածություններ, բանջարանոցներ, տներ և առևտրական կրպակներ ունենալու համար, կորցնում էին իրենց նշանակությունը: Լեհական շլյախտայի համար ոչ մի օրենք գոյություն չուներ: Ամեն մի շլյախտիչ իրեն օրենքից վեր էր հայտարարում և գործում իր սեփական շահերին համապատասխան: Քաղաքի ամբողջ աշխա-

---

17 Мемуары, относящиеся к истории Южной Руси, в. I, Киев, 1890, стр. 158.

18 Архив Юго-Западной России, ч. VII, т. I, стр. 114—116.

19 *Այստեղ նկատի է առնված այն, որ արևելյան շատ առևտրականներ կանգ էին առնում Կիևում երկար ժամանակով և ծավալուն առևտուր անում: Այդ ժամանակամիջոցում նրանք կարողանում էին որոշ հարաբերություններ հաստատել քաղաքի միայնակ կանանց հետ, որոնք կրում էին սպիտակ գլխաշորեր, և երեկոները այցելել նրանց: Հայ, թուրք, թաթար և արևելյան այլ առևտրականների այդ հանդիպումները կիևուհիների հետ, հավանաբար, մասսայական բնույթ են կրել, որը և առաջացրել է Կիևում առևտուր կատարող օտարերկրյա մարդկանց անբարոյական արարքները սահմանափակող բարձր իշխանական հրովարտակ ընդունելու անհրաժեշտությունը:*

20 *Տե՛ս* Акты, относящиеся к истории Западной России, т. I, СПб., 1846, стр. 194—195.

21 Архив Юго-Западной России, ч. VII, т. I, стр. 13—17; М. Довнар-Запольский, Литовские упоминки татарским ордам, Симферополь, 1898, стр. 4—5.

տավոր բնակչության կյանքը գնալով վատթարանում էր. ավելանում էին հարկերը, ուժեղանում էր շլյախտայի ինքնիշխանությունը: Այս բոլորը, ամենից առաջ, ազդում էր աղքատների և այլ երկրներից եկածների վրա:

Ելնելով այդ ծանր կացությունից, հայերը դիմում են Լեհաստանի բազավոր Ստեֆան Բաթորին՝ եկեղեցիներ, հողեր, արհեստանոցներ և կրպակներ ունենալու համար նրանից նոր շնորհագիր ստանալու խնդրանքով: Աղբյուրներում հիշատակություն կա այն մասին, որ հայերին տրվել է բազավորական այդպիսի շնորհագիր[22], բայց արխիվային փաստաթղթերում այդ շնորհագրի տեքստը տակավին չի հայտնաբերված:

Հայերի դրությունը ավելի է ծանրանում 1596 թվականի Բրեստի եկեղեցական ունիայից (միությունից) հետո: Ինչպես հայտնի է, այդ ունիայի համաձայն ուկրաինական ուղղափառ եկեղեցին պիտի միանար կաթոլիկականի հետ և անցներ Հռոմի պապի հովանու տակ: Այդ ունիայից հետո Կիևի կաթոլիկ հոգևորականությունը հայերի ենթումը ուժեղացնում է, նպատակ ունենալով, առաջին՝ գրավել հայկական եկեղեցին և այն վերափոխել կաթոլիկականի, երկրորդ՝ բռնագրավել հայկական եկեղեցու ամբողջ ունեցվածքն ու հողերը և դրանք հանձնել կաթոլիկ եպիսկոպոսությանը, և երրորդ՝ ստիպել հայերին ընդունելու կաթոլիկական դավանանքը և նրանց օգտագործել Կիևի ամբողջ բնակչությանը կաթոլիկացնելու համար: Հավանաբար, այդ ենթումը զգալի չափերի է հասել: Եվ պատահական չէ, որ 17-րդ դարի սկզբներին Լվովի հայկական եկեղեցին սկսում է եռանդուն կերպով պաշտպանել Կիևի հայերին կաթոլիկների հետապնդումներից: Լվովի հայերը նյութական նշանակալից օգնություն են ցույց տալիս Կիևի հայկական եկեղեցուն, որն այդ ժամանակ կոչվում էր «Սրբազնագույն աստվածամոր ծննդյան» եկեղեցի և փայտաշեն էր[23]: Մեզ համար անհասկանալի է մնում, թե ինչու վերջինս որոշ փաստաթղթերում կոչվում է «Աստվածամոր վերափոխման եկեղեցի», իսկ ուրիշներում՝ «Սրբազնագույն Աստվածամոր ծննդյան եկեղեցի»:

Կաթոլիկական ենթումների հետևանքով Կիևի հայերի վիճակը այնքան է բարդանում, որ 1622 թվականին (հնարավոր է և դրանից առաջ) նրանք որոշում են կրոնական տեսակետից ենթարկվել Լվովի հայկական մայր եկեղեցուն՝ նրանից անհրաժեշտ պաշտպանություն, օգնություն և հովանավորություն ստանալու համար:

1622 թ. հոկտեմբերի 7-ին կիևահայերի ընդունած որոշման մեջ, որտեղ խոսվում է նրանց եկեղեցին իր շենքերով, ցանքսերով ու կալվածքներով Լվովի հայկական եկեղեցուն ենթարկելու մասին, ասված էր. «яко то ширей по достатку тые привилея их в собе мають, теды они тые вси права з добрами всими звышпоменеными, и которые бы одно коликолвек на потом за ласкою божою приспособити тому костелови могли под моц, владзу, послушенство духовное костела катедрального Львовского Ормянского заложеня внебовзяте[24] наисвятшое панны Марыей в муру будучою[25] и провизоров тамтого костела львовского добровольне тым листом своим под опеку и старанье вшелякое поддают, и тые права свое вшелякие в моц капитулы Львовское религией ормянское и панов старших своих моцю того листу доброволного запису свою влевают, абы их младших будучи вже провизорами и опекунами того костела орменского, и всех его добр и належностей. А маючи то вже моцью того ж то теперешнего запису в досконалой моци вшелякое печалованье и оборону вшелякую чинили и од импедиментов[26] и презных трудностей в судах так кгродских, яко земских и головных, трибуналских, сеймовых, задворных и яких колвек инших терминах, яко власные посесоре и провизоре на вечные часы той костел ормянский киевский, зо всеми его добрами и приналежностями правне боронили и моц зупольную мали, а не мней якобы в одправованю хвалы божое и в подаваню им к тому костелови их ксенжи богобойных и учонои опущеню и занеханю не было, иилное старанье мели. На што все, што вышей поменило пречеченые особы сповне згодивши и зезволивши и те очевисто перед судом нынешним у книги кгродских киевских признавши просили, абы то их очевистое зознане до книг принято и вписано было, ко-

---

22 Н. Закревский, Описание Киева, т. II, стр. 859.

23 *Նույն տեղում, էջ 861։*

24 Взятую с неба.

25 Каменную.

26 Затруднений.

торое за принятыем судовыми записане, с которых и сей выпис под печатми нашими есть выдан. Писан у Киеве. Павел Реховский, писар кгродский киевский»[27].

Մենք փաստաթղթից այդպիսի ծավալուն մեջբերում կատարեցինք, որպեսզի հանգամանորեն ցույց տանք Կիևի հայկական եկեղեցու վիճակը, հայերի հոգատարությունը նրա նկատմամբ, դեպի Լվովի մայր եկեղեցին նրանց ունեցած հույսերը՝ կաթոլիկական հարձակումներից իրենց շահերը պաշտպանելու համար: Փաստաթուղթը վկայում է, որ հայերի դրությունը բավական բարդ է եղել: Եվ դա պատահական չէ: 17-րդ դարի առաջին քառորդին հայկական ընտանիքների թիվը Կիևում մեծ չէր՝ ընդամենը մեկ տասնյակ: Այդպիսի պայմաններում նրանց համար անհնարին էր դիմադրություն ցույց տալ կաթոլիկ հոգևորականության առավել կազմակերպված և վնասակար հարձակումներին, հոգևորականության, որին ամեն կերպ օգնում էին թե՛ Կիևի վոեվոդը և թե՛ լեհական թագավորը: Եկեղեցին Լվովի հայկական համայնքի հավանավորությանը հանձնելը առնչվում էր նաև այն բանի հետ, որ 17-րդ դարի 20-ական թվականներին Կիևում ունիտորական և կաթոլիկ հոգևորականության հարձակումները ուժեղացել էին նաև ուղղափառ եկեղեցու վրա: Քաղաքում նրանք փակել էին մի շարք եկեղեցիներ: Կաթոլիկ հոգևորականները նույնիսկ ձգտում էին իրենց ձեռքը գցել Սոֆիայի տաճարը, Կիև-Պեչերյան լավրան ու վանքը: Այսպիսի իրավիճակում սակավաթիվ հայկական գաղութը չէր կարող պահպանել իր անկախությունը:

Կիևահայերի կողմից իրենց եկեղեցու հանդեպ ձեռնարկած նախազգուշական միջոցառումը նրանց նշանակալից չափով օգնեց՝ պաշտպանելու իրենց շահերը կաթոլիկ հոգևորականության և ունիտորների հարձակումներից: Ավելի քան քսան տարի նրանք հաջող կերպով պաշտպանում էին իրենց տիրույթները: Կիևահայերի և կաթոլիկ հոգևորականության միջև դատական երկարատև հաշիշուկի առարկա էր դարձել հատկապես Օրոլոնում գտնվող խոտհարքը, որը դեռևս 15-րդ դարից պատկանում էր հայերին: Քաղաքային դատարանը մի քանի անգամ վերանայում է կաթոլիկ եպիսկոպոսության պահանջները այդ հողերի վերաբերյալ, բայց հայերը ունեին համապատասխան փաստաթղթեր և հաջող կերպով պաշտպանում էին իրենց շահերը: Ընդ որում, Օրոլոնը գտնվում էր Կիևի քաղաքային մագիստրատի անօրինության տակ, իսկ մագիստրատը պաշտպանում էր հայերի իրավունքները[28]:

Հայերի համար առավել դժվար էր պաշտպանել Սիրեցում գտնվող իրենց տիրույթները: Այնտեղ կաթոլիկ եպիսկոպոսությունը արդեն ընդարձակ հողամասեր ուներ: Սիրեցում եղած տերիտորիան տնօրինում էր Կիևի վոեվոդը, որին նշանակում էր Լեհաստանի թագավորը: Վոեվոդը կաթոլիկ էր և, բնականաբար, գործում էր հօգուտ կաթոլիկ հոգևորականության: 1645 թվականի վերջերին կամ 1646 թվականի սկզբներին Կիևի կաշտելյան Ալեքսանդր Պյասեչինսկու ժամանակ կաթոլիկ հոգևորականությունը բռնագրավում է հայերի՝ Սիրեցում եղած հողերը: Հայերը քաղաքային դատարանում բողոքարկում են դոմինիկյանների դեմ: Բայց հայերի համար չափազանց դժվար էր պայքար մղել դոմինիկյան հոգևորականների դեմ: Վերջիններիս պաշտպանում էր Կիևի կաշտելյանը, որն այն ժամանակ կատարում էր Կիևի վոեվոդի պարտականությունները, ինչպես նաև՝ կաթոլիկ եպիսկոպոսը և քաղաքի թագավորական ամբողջ վարչությունը: Իշխանությունների նշման տակ դատարանը ստեղծված է լինում վճիռը կայացնել հօգուտ կաթոլիկ հոգևորականության: Դատավճռի համաձայն դոմինիկյանները յուրացնում են «արտերը, քրաղացին մեռնակա մի բակ, Դեբասիմի լճակի մոտ այգի տնկեցին... իսկ դատական ծախսերի դիմաց հայերը պարտավոր էին վճարել 200 լեհական ոսկի»[29]: Այս ամենը վկայում է, որ լեհ-շլյախտական պետության դեմ ուկրաինական ժողովրդի ազատագրական պատերազմների նախօրյակին հայերի դրությունը Կիևում շատ բարդացել էր: Այդպիսի վիճակի մեջ էին ընկել հայերը ուկրաինական նաև մյուս քաղաքներում: Ահա թե ինչու, երբ Բոգդան Խմելնիցկու ղեկավարությամբ 1648—1654 թվականներին Ուկրաինայում սկսվեց ազատագրական պատերազմը, շատ հայեր ակտիվ մասնակցություն ունեցան լեհական շլյախտայի սոցիալական և ազգային ճնշման դեմ ուկրաինական ժողովրդի ազատագրական այդ պայքարին: Այդ հարցը, սակայն, մեր թեմայի սահմաններից դուրս է և կարիք է զգում հատուկ ուսումնասիրության:

Ամփոփելով՝ պիտի եզրակացնել, որ հայերը Կիևում ապրել են սկսած հին ժամանակներից: Չնայած բարբարների բազմաթիվ հարձակումներին և նրանց կողմից քաղաքը ավերելուն, հա-

---

27 «Чтения в обществе истории и древностей Российских», Москва, 1846—1847, стр. 864; Н. Закревский, Описание Киева, т. II, стр. 860—861:

28 «Киевские эпархиальные ведомости», 1863, стр. 255.

29 Н. Закревский, Описание Киева, т. II, стр. 725.

ները կրկին վերաշինել են իրենց տները, արհեստանոցները, գրաղվել են արհեստներով ու առևտրով: Հայ արհեստավորները մասնակցել են Կիևի ամրոցի և պաշտպանական այլ ամրությունների կառուցման և վերանորոգման աշխատանքներին:

Հայերի մեջ կային որակյալ արհեստավորներ, որոնք ծանոթ էին արհեստագործության ասպարեզում այլ երկրների ձեռք բերած նվաճումներին: Կիևում այս կամ այն չափով նրանք կապված էին ուկրաինացի արհեստավորների հետ, սրանց հաղորդում էին իրենց տեխնիկական փորձը: Դրա շնորհիվ նրանք դրականապես ազդում էին քաղաքային արհեստների ու արվեստի զարգացման վրա:

Կիևի վրա քաբարների կատարած արշավանքների ժամանակ հայերը միշտ էլ ակտիվ մասնակցություն էին ունենում քաղաքի պաշտպանությանը: Բնականաբար, դա մեծապես նպաստել է հայերի և քաղաքի ուկրաինական բնակչության միջև սերտ փոխհարաբերություններ հաստատելու և ամրապնդելու գործին: Հայերի և ուկրաինացիների միջև հաստատվել էին ազգակցական կապեր: Կրոնական տարբերությունը չի խոչընդոտել հայ-ուկրաինական ամուսնական կապերին:

Այս բոլոր փաստերը վկայում են, որ հայերի բազմադարյան կյանքը Կիևում և նրանց փոխհարաբերությունները ուկրաինական բնակչության հետ մեծ նշանակություն են ունեցել հայ և ուկրաինական ժողովուրդների միջև եղած տնտեսական, քաղաքական և մշակութային կապերի զարգացման համար: Պատմաբանների խնդիրն է խոր և ուշադիր կերպով շարունակել այս ճարցի ուսումնասիրումը և այն բազմակողմանի լուսաբանել սովետական գրականության էջերում: